

Հայ ազգային կոնգրեսի էկոլոգիական քաղաքականության հիմքում ընկած էլակետային մոտեցումները.

Հայ ազգային կոնգրեսը, որպես իր տնտեսական և էկոլոգիական քաղաքականության կառուցակարգի հիմքում ընկած քաղաքական դիրքորոշում, ճանաչում է բնակչության առողջության և բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի առաջնահերթությունը կարճաժամկետ տնտեսական շահով զուգորդվող հասարակական հարաբերությունների նկատմամբ: Հայաստանի բնաշխարհի հարուստ բազմազանությունը լայն հնարավորություններ է ստեղծում կանաչ տնտեսության զարգացման համար, մինչդեռ ներկայումս իրականացվող հանքահումքային, սպառողական տնտեսական քաղաքականությունը անդառնալիորեն ոչնչացնում է բնության բաղադրիչները՝ անհնարին դարձնելով կայուն և հեռանկարային տնտեսական զարգացման հնարավորությունները:

ՀԱԿ-ի էկոլոգիական քաղաքականության հայեցակարգի առանցքը կազմում է կայուն տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի պահպանության հավասարակշռման ռազմավարական ընկալումը՝ հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգի մաս կազմող՝ Հայաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերով սահմանված էկոլոգիական իրավակարգավորումը: Մարդու էկոլոգիական իրավունքները պետք է դիտվեն որպես կենսական նշանակություն ունեցող հիմնարար և գերակա իրավունքներ:

Այս դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ էկոլոգիական քաղաքականության տիրույթում է գտնվում հասարակության կենսագործունեության սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքի գրեթե ողջ համալիրը՝ սոցիալական ապահովություն, առողջապահություն, կրթություն, մշակույթ, սպորտ և այլն: Էկոլոգիական մշակույթը օրգանապես փոխկապակցված է երկրի տնտեսական զարգացման, էներգետիկ անվտանգության, բնակչության սոցիալական վիճակի, գիտության և կրթության, առողջապահության, գյուղատնտեսության և այլ ոլորտների հետ, նպաստում է բարձր տեխնոլոգիաների զարգացմանը, անմիջականորեն ազդում է ներքին և արտաքին միգրացիայի միտումների վրա: Հետևապես, էկոլոգիական խնդիրների լուծումը պայմանավորում է դրա հետ շաղկապված այլ ոլորտներում իրականացվելիք համակարգային ծրագրերի մշակումը:

Վերջին տարիներին կատարված համատարած ծառահատումները, բնական պաշարների վրա տոտալ և անվերահսկելի հարձակումը, հանքարդյունաբերության հետևանքով ամբողջ էկոհամակարգի խեղումն իսպառ հյուծել են հայրենի բնությունը՝ հանգեցնելով էկոլոգիական պայթյունավտանգ իրավիճակի: Չնայած վերջին տարիներին գրանցված առերևույթ տնտեսական աճին՝ բնության վերականգնման համար չի իրականացվել որևէ շոշափելի աշխատանք, իսկ բնապահպանական վճարները ծախսվել են քաղաքացիական հասարակության կողմից անվերահսկելի եղանակներով՝ բնության վերականգնման հետ

որևէ աղերս չունեցող նպատակներով: Ներկայումս Հայաստանում այլևս գրեթե չեն մնացել տարածքներ, որտեղ արտադրվող գյուղմթերքը էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ լինի: Մարդիկ ուտում են թունաքիմիկատներով և ծանր մետաղներով հարստացված մրգեր և բանջարեղեն, որոնցով հատկապես աղտոտված են երկրի հյուսիսային և հարավային շրջանները: Շրջակա միջավայրի անվերահսկելի աղտոտման հետևանքով թունավորվում են հոսքաջրերը, որոնցով ոռոգվում է հողը: Մթնոլորտային օդի և շրջակա միջավայրի այսօրինակ աղտոտման հետևանքով վերջին շրջանում կտրուկ ավելացել են սիրտ-անոթային և ուռուցքային հիվանդությունները: ՀԱԿ-ի առողջապահության հանձնաժողովի մշակած “Առողջության պահպանման քաղաքականության հիմնադրույթներում” ներկայացված ծրագրային քաղաքականության շրջանակներում ևս այս հիվանդությունների դեմ պայքարին առանձնակի ուշադրություն է հատկացվում, քանի որ դրանց հետևանքով մահացության թիվը Հայաստանում կազմում է մահացության ընդհանուր կառուցվածքի մինչև 70 տոկոսը: Հատկապես հագեցած հանքարդյունաբերական գոտիներում մարդկանց առողջական վիճակը ենթակա է համալիր հետազոտման: Առողջ սերունդ ունենալու հիմահարցն այսօր դարձել է ազգային անվտանգությանը սպառնացող և հրատապ լուծումներ պահանջող գերխնդիր:

Բնությունը վերականգնելու և բնական ռեսուրսների օգտագործման գործընթացը կանոնակարգելու համար անհրաժեշտ է արմատապես վերանայել երկրի էկոլոգիական քաղաքականությունը, բնօգտագործման ոլորտում կատարել մի շարք հարկային, իրավական, գիտակրթական, հոգևոր-մշակութային բնույթի հիմնարար փոփոխություններ: Որպես ազգային անվտանգության բաղադրիչ պետք է դիտվի բնակչությանը բավարար չափով էկոլոգիապես առողջ գյուղատնտեսական արտադրանքով ապահովելու հնարավորությունը, ինչը կախված է անհրաժեշտ էկոլոգիական որակի շրջակա միջավայրից:

Էկոլոգիական քաղաքականության ռազմավարությունը պետք է իրականացվի համապարփակ և գիտականորեն հիմնավորված՝ կայուն զարգացման երկարաժամկետ ազգային ծրագրի մշակմամբ և կիրառմամբ: Երկրի էկոլոգիական իրավիճակը պարտադրում է, մասնավորապես՝ էներգետիկայի, հանքարդյունաբերության, անտառտնտեսության, գյուղատնտեսության, քաղաքաշինության, ջրային ռեսուրսների, թափոնների կառավարման և այլ ոլորտներում գոյություն ունեցող բարձիթողի վիճակը կանոնակարգելու համար դիմելու կտրուկ քայլերի՝ ընդհուպ մինչև դադարեցնելու գործող կամ լիցենզավորման փուլում գտնվող առանձին տնտեսվարող սուբյեկտների՝ բնակչության էկոլոգիական անվտանգության հետ անհամատեղելի գործունեությունը՝ անկախ կատարված ներդրումների ծավալից կամ տնտեսական բնույթ ունեցող այլ հանգամանքներից:

Հայաստանի բնությունն իր բազմազանությամբ և հագեցվածությամբ առանձնահատուկ նշանակություն ունի համաշխարհային ֆլորայի և ֆաունայի համար: Մեր Հանրապետության տարածքը կազմում է ամբողջ Կովկասի ընդամենը 6.7 տոկոսը, սակայն այստեղ է կենտրոնացած Կովկասի բուսական բազմազանության շուրջ 60 տոկոսը (շուրջ 3500 տեսակի բույսեր): Այս բացառիկ բնաշխարհը մեզ համար պատասխանատվություն է առաջացնում պահպանելու հայրենի բնությունը իսկ տնտեսական զարգացման ռազմավարական

ծրագրերը մշակելու էկոլոգիապես մաքուր բիզնեսի շրջանակներում (էկոտուրիզմ և էթնոտուրիզմ, օրգանական գյուղատնտեսություն և այլն): Վերականգնվող և չվերականգնվող բնական պաշարների, ընդերքի օգտակար հանածոների շահագործման տնտեսական քաղաքականությունը պետք է խարսխված լինի շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների ողջամիտ օգտագործման սահմանադրական սկզբունքի վրա, երաշխավորելով վերականգնվող ռեսուրսների վերարտադրությունը և չվերականգնվող պաշարների երկարաժամկետ օգտագործումը:

Քաղաքային կանաչ տարածքների, այգիների և պուրակների պահպանությունը ևս պետք է իրականացվի էկոլոգիական իրավունքի իրավական ռեժիմով և հանդիսանա քաղաքային բնակչության էկոլոգիական իրավունքների մաս: Քաղաքային կանաչ տարածքները տնտեսական նշանակությամբ օգտագործվելու նպատակահարմարությունը (սրճարաններ, կրպակներ, բնակելի շենքեր և այլն) պետք է սահմանված կարգով համաձայնեցվի շահագրգիռ հասարակության հետ:

Էկոլոգիական քաղաքականությունը մշակվում և իրականացվում է վերը նշված հիմնախնդիրների և առաջնահերթությունների հաշվառմամբ՝ Հայ ազգային կոնգրեսի տնտեսական, առողջապահության և կրթության հանձնաժողովների կողմից մշակված «100 քայլ», «Առողջության պահպանման քաղաքականություն. հիմնադրույթներ», «ՀՀ հանրակրթության հեռանկարային զարգացման ծրագիր» նախագծերով ներկայացված ծրագրային դիրքորոշումների համակարգային միասնականության պահպանմամբ:

Մարդու էկոլոգիական իրավունքների հարգումը և օրենսդրական ամրագրումը.

ՀԱԿ-ի էկոլոգիական քաղաքականության մոտեցումներն ու գործելաոճը հիմնված են “արդյունքի պարտավորության” սկզբունքի վրա: Որպես Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում ընդունված և անդամ պետություններին ներկայացված պոզիտիվ պարտավորություն՝ պետությունը պատասխանատվություն է կրում “օրենսդրական, վարչարարական և բոլոր այլ համապատասխան միջոցներով քայլեր ձեռնարկելու” հարցում առողջ շրջակա միջավայրում ապրելու սահմանադրական իրավունքը կենսագործելու համար: Ընդ որում, “բոլոր համապատասխան միջոցներով քայլեր ձեռնարկել” իրավական բնորոշումը ենթադրում է, որ ձեռնարկված միջոցները պետք է լինեն օպտիմալ, այսինքն՝ տվյալ իրավիճակում արդյունքի հասնելու համար ամենաշատ “համապատասխանող միջոցները”: Սույնով, ՄԱԿ-ի իրավասու կառույցների իրավական եզրութաբանությամբ, պետության վրա դրվում է ոչ միայն “միջոցի”, այլ նաև “արդյունքի պարտավորություն”, քանի որ պետության պարտավորություններով պայմանավորված անհրաժեշտ միջոցառումները բարեխղճորեն և պատշաճ մակարդակով իրականացնելու դեպքում պետք է ողջամտորեն լինի նաև համարժեք դրական արդյունք (ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի 3-րդ Ընդհանուր

մեկնաբանություն, ՄԱԿ-ի փաստաթուղթ E/1991/23): Արդյունքի ապահովման՝ վերը նշված սկզբունքն ընկած է սույն հայեցակարգում ամփոփված բոլոր ռազմավարական մոտեցումների և գործնական քայլերի հիմքում:

- Որպես պետության էկոլոգիապես մաքուր և հեռանկարային տնտեսական զարգացման երաշխիք՝ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել էկոլոգիապես ոչ մաքուր տնտեսական գործունեության նկատմամբ (հանքարդյունաբերություն և այլն) էկոլոգիապես մաքուր տնտեսական գործունեության (գյուղատնտեսություն, տուրիզմ և այլն) գերակայության սկզբունքը:
- Անձի էկոլոգիական իրավունքների խախտման հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի համար պատասխանատու պետական մարմինները, իրավունքի խախտումն անմիջականորեն կատարած սուբյեկտի հետ միասին, կրում են լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն պատճառված վնասի փոխհատուցման և խախտման հետևանքները վերացնելու համար: Սահմանադրության 33.2-րդ հոդվածով ամրագրված՝ “իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու” յուրաքանչյուրի իրավունքն առնվազն ներառում է օրենքով երաշխավորված՝
 - 1) էկոլոգիապես առողջ սնունդի և մաքուր խմելու ջրի իրավունքը, որի ապահովման պատասխանատվությունը, այդ թվում դատական կարգով (մասնավոր սուբյեկտների հետ միասին՝ լրացուցիչ (սուբսիդիար) պարտավորության իրավական ռեժիմով) պետք է կրեն պետական պատասխանատու մարմինները՝ իրենց կանոնադրական պարտավորությունների շրջանակներում.
 - 2) թափոնների վերաբերյալ սահմանված նորմատիվների խախտման հետևանքով իրենց առողջությանը կամ ունեցվածքին պատճառված վնասի համար քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված լիարժեք հատուցում պահանջելու իրավունքը, որը պետք է վերաբերի ոչ միայն արտադրական և սպառման թափոնների վնասակար ազդեցության հետևանքով պատճառված վնասին, այլև, առավելապես, հանքարդյունաբերության ընթացքում առաջացող բոլոր տեսակի վնասակար ազդեցություններին:
- Որպես Ստոկհոլմի հռչակագրով, 2003թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 2003/71 բանաձևով և դրան հաջորդած մի շարք այլ փաստաթղթերով հաստատված մարդու հիմնարար իրավունք՝ պետությունը օրենսդրական պատշաճ կարգավորման, վարչարարական և այլ արդյունավետ միջոցներով պարտավոր է հասարակության յուրաքանչյուր անդամի համար ապահովել շրջակա միջավայրին վնաս պատճառելու հետևանքով անձի առողջությանը և գույքին պատճառված վնասի փոխհատուցման և շրջակա միջավայրի վերականգնման (redress and remedy) ապահանջի հնարավորություն (այդ թվում՝ դատական կարգով):

1. Շրջակա միջավայրի պահպանման և բնության վերականգնման համակարգային ծրագրի մշակումն ու իրականացումը.

“Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին” Բեռնի կոնվենցիայի հիման վրա ստեղծվող՝ վայրի բնության միավորների ցանցը (Էմերալդ ցանց (Emerald network)) որպես ուսանելի օրինակ և իրավական նախադեպ պետք է ծառայի՝ նույն սկզբունքով Հայաստանի բնության ամբողջական էկոլոգիական ցանց ստեղծելու համար:

Գործող օրենսդրությամբ քաղաքային կանաչ տարածքները և գոտիները շատ թույլ են պաշտպանված, և այդ միավորները էկոցանցում ընդգրկելը պայմանավորված է քաղաքաշինական, տնտեսական և այլ բացասական ազդեցություններից այդ օբյեկտները արդյունավետ պաշտպանելու, էկոլոգիական մշակույթ ձևավորելու, բնությունը չվերահսկվող աղտոտումից և դեգրադացիայից պաշտպանելու, բնական պաշարների ողջամիտ օգտագործումն ապահովելու հրամայականով: Էկոցանցում ընդգրկված էկոլոգիական գոտիների և էկոլոգիական ենթամշակույթի միավորների իրավական և տնտեսական շահագործման ռեժիմը կարգավորվելու է՝ պահպանելով դրանց էկոլոգիական և տնտեսական արժեքն ու նպատակային նշանակությունը:

- Անհրաժեշտ է հանրապետության ամբողջ տարածքը վերցնել էկոլոգիական հաշվառման, որի հիման վրա պետք է ստեղծվի էկոլոգիական ցանց՝ առանձին էկոլոգիական գոտիներով, որոնք պետք է ունենան պահպանման և տնտեսական նպատակներով օգտագործման աստիճանակարգված ռեժիմ: Նշված էկոցանցում պետք է ընդգրկվեն սույն հայեցակարգով նախատեսվող բոլոր էկոլոգիական գոտիները՝ ներառյալ հատուկ պահպանվող տարածքները: Հատուկ պահպանվող տարածքներից գատ էկոլոգիական հաշվառման ցանցում պետք է ընդգրկվեն (1)բոլոր անտառները, (2)ռազմավարական նշանակության ջրային ռեսուրսները, (3)օրգանական և ավանդական գյուղատնտեսությամբ զբաղվելու համար առանձնացված տարածքները, (4)հանգստի և առողջարանային գոտիները, (5)էկոլոգիական ենթամշակույթի օջախներ հանդիսացող օբյեկտները (Արմաշի արհեստական լճակներ, Շաքիի, Ջերմուկի ջրվեժները, Զանգվի կիրճը, Արմավիրի քաղաքային այգին, Երևանի Ուսանողական, Կոմիտասի և այլ այգիները, Օղակաձև զբոսայգին, Դալմայի, Բուսաբանական և այլ այգիներ ու պուրակներ և այլն):

Էկոցանցի մեջ ընդգրկվող օբյեկտներն ունենալու են հետևյալ աստիճանակարգումը՝

1/ հատուկ պահպանվող տարածքներ,

2/ այլ էկոլոգիական գոտիներ,

3/ էկոլոգիական գոտիները շրջապատող բուֆերային գոտիներ,

4/ էկոլոգիական ենթամշակույթի օբյեկտներ:

Էկոցանցում ընդգրկվող էկոլոգիական գոտիների և էկոլոգիական ենթամշակույթի միավորների ամբողջական ցանկը կցվելու է սույն հայեցակարգի հիման վրա մշակվող՝ ՀԱԿ-ի ծրագրային փաստաթղթերում:

- Պետք է ստեղծել Հայաստանի ամբողջ տարածքի էկոլոգիական աշխարհագրական-տեղեկատվական քարտեզ՝ էկոցանց: Որպես էկոցանցում ներառված էկոլոգիական գոտիներ, պետք է նպատակային հաշվառման վերցվեն ՀՀ այն տարածքները, որոնք կազմում են երկրի բուսական և կենդանական աշխարհի կարևոր բաղադրիչներ, ինչպես նաև այն գոտիներն ու էկոլոգիական միավորները, որոնց բնատեսուրսային պայմանները բարենպաստ են էկոլոգիապես մաքուր տնտեսական գործունեությամբ զբաղվելու համար (բոլոր անտառները, ռազմավարական ջրային ռեսուրսներն ու խոնավ տարածքները, առողջարանային և հանգստի, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման համար առանձնացված գոտիները և այլն): Պետական և համայնքային անտառների զանգվածային հատումը արտադրական, այդ թվում՝ հանքի շահագործման նպատակով պետք է անվերապահորեն բացառվի:
- էկոլոգիական գոտիների համար պետք է սահմանվի դրանց նպատակային նշանակությունից բխող իրավական կարգավիճակ: Օրենքով նախատեսվելիք սահմանափակումներին համապատասխան՝ նշված վայրերում պետք է արգելվի կամ սահմանափակվի էկոլոգիապես ոչ մաքուր տնտեսական գործունեությունը: Ընդերքօգտագործման և այլ գործունեության հետևանքով էկոցանցին և դրա բուֆերային գոտուն չպետք է պատճառվի անհամաչափ էկոլոգիական կամ տնտեսական վնաս: Սահմանափակումները պետք է հիմնված լինեն գիտականորեն մշակված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվների վրա, նախատեսեն էկոլոգիական ռիսկերի, պատճառվելիք նյութական վնասի իրավաբանորեն հստակ և որոշակի չափորոշիչներ: Բոլոր ռիսկերը պետք է հաշվարկվեն հնարավոր էկոլոգիական և տնտեսական վնասի շուկայական արժեքին համապատասխան՝ հիմնված քաղաքացիական և ոչ թե վարչական իրավահարաբերությունների իրավական ռեժիմի վրա (ներառյալ՝ բաց թողնված օգուտի գնահատումն ու փոխհատուցումը):
- Ողջամտության սահմաններում այն սեփականաշնորհված կամ վարձակալության տրված օբյեկտները և տարածքները, որոնք կրնդորկվեն էկոլոգիական գոտիներում և էկոլոգիական ենթամշակույթի միավորների ցանկում, պետք է օգտագործվեն դրանց էկոլոգիական ռեժիմին համապատասխան: էկոլոգիական ցանցում ընդգրկված այն տարածքները, որտեղ առկա են դրանց նպատակային նշանակության հետ անհամատեղելի օբյեկտներ, պետք է հանրային գերակա շահի կամ այլ իրավական ռեժիմով վերցվեն՝ անկախ դրանց սեփականության ձևից (Թեղուտի և այլ անտառների՝ հանքարդյունահանման համար տրված տարածքները, Երևանի Հաղթանակ, Օղակաձև և մյուս զբոսայգիների, Հրազդանի կիրճի, Բուսաբանական այգու մասնավորեցված հատվածները, Արմավիրի քաղաքային այգին և այլն):
- Քաղաքային առողջ միջավայր ունենալու համար կարևոր՝ հանրային կանաչ տարածքները, այգիներն ու պուրակները պետք է ունենան պահպանության հատուկ իրավական և տնտեսական ռեժիմ և ընդգրկվեն ստեղծվելիք էկոցանցում՝ որպես էկոլոգիական ենթամշակույթի միավորներ: Պետք է հնարավորինս վերականգնվի

Երևան քաղաքի “նախասրճարանային” արտաքին տեսքը: Քաղաքային բոլոր այգիները, պուրակները, քաղաքային մշակույթի համար նշանակություն ունեցող օբյեկտները բերվելու են իրենց նախնական նպատակային տեսքին:

2. Բնական պաշարների օգտագործման նոր ռազմավարության մշակումն ու իրականացումը: Պաշարների օգտագործման գնահատումը և օգտագործման տարեկան առավելագույն քվոտայի սահմանումը.

Բնական օգտակար հանածոները, մարդու աշխատանքի, կապիտալի, հողի և ինովացիաների հետ միասին, կազմում են պետության՝ տնտեսապես հաշվարկվող կապիտալը: Գործող իրավատնտեսական կառուցակարգի պայմաններում ընդերքի շահագործման համար անհրաժեշտաբար օգտագործվող բնական պաշարները՝ հողը, անտառը, ջրային ռեսուրսները, ներկայումս հանքարդյունաբերողին են տրամադրելիս դրանց կորստի գինը հաշվարկում են ոչ թե դրանց շուկայական, այլ կադաստրային արժեքով: Այսպես, Օրինակ՝ Armenian Coppar Program ընկերությունը օգտակար հանածոյի արդյունահանման նախագծով Թեղուտի հանքավայրի մոտ գտնվող Շնող գետի տնտեսական արժեքը գնահատվել է ընդամենը 175 հազար դրամ: Միննույն ժամանակ, օրենքը չի պահանջում, որ ձեռնարկողը դրանց արժեքի չափով վճարում կատարի: Ներկայումս ՇՄԱԳ-ի շրջանակներում էկոլոգիական վնասի տնտեսական հաշվարկ չի կատարվում, բնության բաղադրիչներին պատճառած վնասի դիմաց ձեռնարկողը չի վճարում, ինչի արդյունքում անխնա կերպով ոչնչացվում են ամբողջական էկոհամակարգեր անգամ այն դեպքում, երբ նախատեսվող գործունեությունից ստացվող շահույթը անհամեմատ ավելի փոքր է բնությանը պատճառվող վնասի տնտեսական արժեքից (օրինակ՝ Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագիրը): Օգտագործվող բնական պաշարները, սակայն, հանդիսանում են կապիտալ, որոնք պետք է հաշվարկվեն ոչ թե կադաստրային, այլ շուկայական գնով, քանի որ ընդերքի օգտակար հանածոների արժեքը որևէ նախապատվություն չունի արդեն իսկ առկա այլ կապիտալի՝ հողերի, ջրերի, կենդանական ու բուսական աշխարհի և այլ բնական ռեսուրսների նկատմամբ:

- Որպես բնառեսուրսների օգտագործման ելակետային սկզբունք պետք է ընդունել այն բացարձակ ցուցիչը, որ վերականգնվող բնական ռեսուրսների (հող, ջուր, անտառ և այլն) օգտագործման դինամիկան չպետք է գերազանցի այդ ռեսուրսների վերականգնման տեմպերը: Չվերականգնվող ռեսուրսների համար պետք է սահմանվի օգտագործման առավելագույն քվոտա՝ տարեկան 1-2 տոկոս թույլատրելի օգտագործմամբ: Յուրաքանչյուր տարի պետական բյուջեի հետ պետք է սահմանվի օգտակար հանածոների հայտնի պաշարների հաշվեկշիռը և հաստատվի այդ պաշարների օգտագործման՝ տվյալ տարվա թույլատրելի քանակը՝ ըստ օգտակար հանածոյի տեսակի և կոնկրետ հանքավայրերի: Յուրաքանչյուր տարի Ազգային

Ժողովը պետք է սահմանի երկրում հաշվառված բոլոր բնական պաշարների (վերականգնվող և չվերականգնվող) շուկայական գինը՝ միջազգային գներին համապատասխան, ինչպես նաև հաշվետու տարվա համար կոնկրետ բնական պաշարների օգտագործման թույլատրելի չափը:

- Հանքարդյունաբերական համալիրը՝ ներառյալ դրա առանձին միավորները (պոչամբարներ, լցակույտեր) ենթակա են պարտադիր էկոլոգիական ապահովագրման: Պարտադիր ապահովագրման են ենթակա նաև հանքի շահագործման հետևանքով առաջացող թափոնների լցակույտերը, պոչամբարները և այլ թափոնատեղիները: Գործող օրենքով պոչամբարները (տեխնածին հանքավայրեր) դուրս են բերվել մասնավոր ընկերություններին պատկանող հանքային համալիրների կազմից և համարվում են պետության սեփականություն: Նման իրավիճակն անթույլատրելի է, քանի որ դրանց անվտանգությունն ապահովելու համար պահանջվում են հսկայածավալ ծախսեր, որոնք հաճախ ավելին են, քան հանքի շահագործումից պետության ստացած շահույթը: Պոչամբարները պետք է ընդգրկվեն հանքարդյունահանման համալիրի կազմում և դիտվեն որպես հանքի բաղկացուցիչ մաս՝ դրա ենթակառուցվածք:
- Որպես առկա և տնտեսական արժեք ունեցող կապիտալ, բնության բաղադրիչները պետք է գնահատվեն ըստ իրենց շուկայական արժեքի՝ հիմք ընդունելով այդ բաղադրիչների բնականոն ֆունկցիաներից ստացվող տնտեսական օգուտը (օրինակ՝ անտառն ունի ջրապահպան, ածխաթթու գազի կապման ֆունկցիաներ, արտադրում է թթվածին, անտառային կողմնարտադրանք և այլն): Պետք է մշակվեն էկոլոգիական վնասի տնտեսական հաշվարկման չափանիշներ: Շրջակա միջավայրին վնաս պատճառող գործունեություն իրականացնելու պարագայում ձեռնարկողը պետք է քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակներում ամբողջությամբ փոխհատուցի պատճառվելիք տնտեսական վնասի շուկայական արժեքը՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

3. Բնական պաշարների շահագործման կանոնակարգումը: Էկոլոգիական որակապես նոր քաղաքականության անհրաժեշտությունը.

Հաշվի առնելով հատկապես հանքարդյունաբերության վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ անհրաժեշտ է մշակել կանխարգելիչ միջոցներ՝ բնական միջավայրն անվերականգնելի դեգրադացիայից պաշտպանելու համար: Դրանք վերաբերում են ինչպես բնօգտագործման և բնապահպանական վճարների ավելացմանը, այնպես էլ քաղաքացիաիրավական հիմքերով բնության բաղադրիչների տնտեսական արժեքի վերագնահատմանը: Բնօգտագործման նոր քաղաքականության պայմաններում պետական բյուջե պետք է մուտք արվի հանքի օգտակար հանածոների արժեքի 50-70 տոկոսը՝ ելնելով

արդյունահանվող բնական պաշարի շահութաբերության ցուցիչից: Պետք է նաև օրենքով ամրագրվի, որ ընդերքի օգտակար հանածոների հայտնի պաշարների և դրանց երևակումների (պետության բացառիկ սեփականության) նկատմամբ հանրությունը համարվում է լիարժեք իրավասուբյեկտ և իրավունք ունի այդ գույքի տնօրինման նկատմամբ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների և այլ խմբերի միջոցով վերահսկողություն սահմանելու, այդ թվում՝ դատական պաշտպանության դիմելու (մեխանիզմները կներկայացվեն ստորև):

- Ներկայումս հանքաքարի հիմնական և ուղեկից բաղադրիչների ոչ լիարժեք կորզման, հանքաքարի աղքատացման պատճառով ընդերքում հաշվառված օգտակար հանածոների պաշարների 20-30 տոկոսը կորում են: Հանքարդյունաբերողների կողմից ցուցաբերվող նմանօրինակ անբարեխիղճ վերաբերմունքը վերացնելու համար պետք է հանքի օգտակար բնական պաշարի ամբողջ համագումարը, ներառյալ՝ ոչ մեծ քանակությամբ, սակայն տնտեսական արժեք ունեցող օգտակար հանածոները ներառվեն հանքի բնական պաշարի՝ վաճառքի ենթակա արժեքի մեջ: Այսպիսի մոտեցման պարագայում հանքարդյունահանող կազմակերպության համար տնտեսապես շահութաբեր չի լինի գործունեություն իրականացնել հանքանյութի ոչ լրիվ արդյունահանմամբ կամ ցածրորակ և շրջակա միջավայրի աղտոտման տեսանկյունից վնասաբեր տեխնոլոգիաների կիրառմամբ: Դա կստիպի հանք շահագործողներին իրականացնել օգտակար հանածոների ամբողջական կորզում և կնվազեցնի ծանր մետաղներով հարուստ թափոնների արտանետումը շրջակա միջավայր:

Հետևապես, պետք է սահմանել հանքի՝ տնտեսական արժեք ներկայացնող օգտակար հանածոների լիակատար կորզման պարտադիր պահանջ: Հանքի բոլոր օգտակար հանածոների, ներառյալ՝ համատեղ գտնվող օգտակար հանածոների և դրանց ուղեկցող բաղադրամասերի ամբողջական արժեքը պետք է հաշվարկվի միջազգային շուկայում առկա գներին համարժեք գնահատման և հաշվարկման գնով (բացառությամբ տեխնոլոգիական անխուսափելի կորուստների):

- Յուրաքանչյուր տարի պետական բյուջեի հետ միասին պետք է հաստատել արդյունահանվող օգտակար հանածոների արժեքը հաշվետու տարվա կտրվածքով և, հանքանյութի գների փոփոխությունների հետ զուգահեռ, ճշգրտել պետությանը վճարվելիք գումարի չափը՝ հիմք ընդունելով հաշվետու տարվա ընթացքում օգտակար հանածոների մարված պաշարների, օգտակար հանածոների փաստացի աղքատացման ու կորուստների (թույլատրելի և անթույլատրելի) ծավալը:
- Հանքային իրավունքներ և վնասակար այլ արտադրության համար թույլտվություն տրամադրելիս սահմանել թափոնների հնարավոր առավելագույն վերամշակման պարտադիր պայման, ինչի տեխնիկական հնարավորությունը պետք է կազմակերպությունը ունենա հանքի շահագործման թույլտվություն ստանալու համար: Պետք է սահմանվեն նաև թափոնների առավելագույն չափով վերամշակման

քանակական և որակական պարտադիր չափանիշներ՝ միջազգային բարձր ստանդարտներին համապատասխան: Արդեն իսկ գործող կազմակերպությունները պետք է ողջամիտ ամենակարճ ժամկետում (առավելագույնը 3 տարվա ընթացքում) իրենց տեխնոլոգիաները համալրեն նշված պահանջները կատարելու համար հնարավոր աստիճանի չափով:

- Հանքի արժեքը սահմանելիս որպես միանվագ վճարվող գումար պետք է նախատեսել այդ պաշարների շահագործման (արդյունահանման) համար անհրաժեշտաբար օգտագործվող կամ ոչնչացվող այլ բնական ռեսուրսների շուկայական արժեքը (փայտանյութ, հողի բերրի շերտ, ջուր, կենդանական և բուսական աշխարհ և այլն), որոնց համար պետք է միանվագ կերպով գանձվի բնապահպանական վճար: Ինչպես վերևում նշվեց, շրջակա միջավայրի բաղադրիչների ոչնչացման համար գանձվող տնտեսական վնասը պետք է հաշվարկվի կորստի ենթարկվող բնական բաղադրիչների շուկայական գնի և քաղաքացիական օրենսդրությամբ հաշվարկված բաց թողնված հասույթի չափով:
- Եթե տնտեսական գործունեության հետևանքով տվյալ տարածքի հողերը պետք է դուրս բերվեն տնտեսական հաշվեկշռից, ապա այդ հողերի արժեքը պետք է որոշվի ոչ թե հողի կադաստրային գնով, այլ շուկայական գնով, որին գումարվում է բնական ռեսուրսների, այդ թվում՝ դրանց օգտագործման արդյունքում ստացվելիք բաց թողնված օգուտի արժեքը (օրինակ՝ հանքի կամ պոչամբարի համար լեռնահատկացման ակտում ընդգրկված հողերը):
- Յուրաքանչյուր ամփոփ շրջանի (մարզի) բնակչության պոտենցիալ քանակին համաչափ պետք է սահմանվեն բնամթերային գյուղատնտեսություն իրականացնելու համար անհրաժեշտ էկոլոգիական գոտիներ, որոնց տարածքը պետք է սահմանվի՝ հիմք ընդունելով տվյալ վայրում էկոլոգիապես ոչ մաքուր տնտեսական գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, բնակավայրերի խտությունն ու սփռվածությունը, հատուկ պահպանվող տարածքների առկայությունը և այլ ցուցանիշներ:
- Սահմանել, որ անտառային և գյուղատնտեսական նշանակության հողերի (այդ թվում՝ բնական պաշարների արդյունահանման նպատակով հատկացվող) նպատակային նշանակությունը կարող է փոխվել միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական գնահատականի առկայության դեպքում և համապատասխան ազդակիր համայնքի համաձայնությամբ: Ազդակիր համայնքի որոշումը պետք է արտահայտված լինի տեղական հանրաքվեի, հարցման կամ այլ արդյունավետ միջոցներով և լինի որոշիչ՝ անկախ շրջակա միջավայրի վրա ազդեցության մասնագիտական գնահատականից: Մինչև հողի նպատակային նշանակությունը փոխելը, պետք է արգելվի արդյունաբերական (մասնավորապես՝ հանքարդյունաբերական) նպատակներով հողի շահագործումը: «Ազդակիր համայնքից» բացի հողերի կատեգորիայի փոփոխությունը կարող է արգելել նաև «շահագրգիռ հասարակությունը» բայց միայն այդ դեպքերում, եթե առկա է իրավունքի

խախտում («ագդակիր համայնք» և «շահագրգիռ հասարակություն» եզրույթների իրավական բնորոշումները կտրվեն ստորև):

- Որպես անտառապատման ռազմավարական հայեցակարգ, մշակել համապարփակ ծրագիր Հանրապետության տարածքի 28-30 տոկոսը անտառային նշանակության հողերի կազմում ընդգրկելու և անտառապատելու վերաբերյալ՝ կլիմայական և ռելիեֆային հնարավորությունների սահմաններում՝ բոլոր մարզերի համաչափ անտառապատման սկզբունքով: Մինչև այս տոկոսային շեմին հասնելը պետական և համայնքային անտառները չեն կարող ունենալ արդյունաբերական անտառի իրավական կարգավիճակ: Հատուկ և պաշտպանական նշանակության անտառային հողերի նպատակային նշանակությունը չի կարող փոփոխվել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության կամ ավելի ցածր մակարդակի հողերի:
- Պետք է սահմանվի ջրային ռեսուրսների կառավարման ընթացքում կորուստների թույլատրելի առավելագույն չափ, որից ավելի կորցնելու համար ջրային տնտեսությունը կառավարող ձեռնարկությունը պետք է հանրությանը փոխհատուցի կորսված ջրի գինը: Ջրավազանային, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերն անհրաժեշտ տեխնիկական վիճակի բերելու համար պատասխանատու կազմակերպություններին պետք է տրվի ողջամիտ (առավելագույնը երեք տարվա) արտոնյալ ժամկետ՝ պետական աջակցությամբ:
- Պետք է հիմնովին վերականգնել կեղտաջրերի մաքրման կայանների համակարգը: Գործարանների, պոչամբարների վնասակար նյութերը պետք է պարտադիր ֆիլտրացվեն մինչև բնական ջրատարեր թափվող հոսքաջրերին կամ կոյուղուն խառնվելը: Այդ նպատակով պետք է վերակառուցել նախկինում գործող մաքրող կայանները, կամ կառուցել նորերը: Հաշվի առնելով մեծածավալ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը՝ այս ծրագիրը պետք է իրականացվի ողջամիտ ժամանակահատվածում՝ ծրագրին ներգրավելով միջազգային դոնորների, ներպետական և միջազգային բնապահպանական ֆոնդերի միջոցները:
- Պետք է իրականացվի գետերի անձնագրավորում, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման միջոցով սահմանափակվի փոքր ՀԷԿ-երի քանակը և նորմավորվի բոլոր ՀԷԿ-երի ջրաթողությունը՝ ապահովելով ջրային կենդանիների ձվադրման հարցի կարգավորումը, ինչպես նաև ռոտզման համար ջրի բավականացման հիմնախնդիրը:
- Սևանա լիճը և նրա ռեկրեացիոն գոտին պետք լինեն բոլորի համար անվճար հանգստի գոտի: Լողափը չի կարող տարանջատվել հանրայինի և մասնավորի՝ բոլոր լողափերը հանրային են: Սևանա լճի տարածքում վարձակալական հիմունքներով տնտեսվարող սուբյեկտներին պետք է արգելվի պատնեշների, ցանկապատների կամ ցանկացած այլ միջոցներով խոչընդոտել հասարակության անդամների մուտքը դեպի այդ տարածքներ (Հարսնաքար և այլ ափամերձ օբյեկտներ): Բնակչությունից կարող է վճար պահանջվել միայն այն դեպքում, երբ նրանք օգտվում են տարածքը

վարձակալած (այդ գոտիներում որևէ տնտեսական գործունեություն իրականացնող) տնտեսվարողի գույքից կամ ծառայություններից: Սևանա լճի ափամերձ վարձակալված տարածքներում կառուցապատման համար նախատեսված տարածքը չի կարող գերազանցել վարձակալված տարածքի 50 տոկոսը (ներկայիս 80 տոկոսի փոխարեն):

- Մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի չափից ավելի արտանետումները պետք է բացառվեն: Այն ձեռնարկությունները, որոնց արտանետումները գերազանցում են այս ցուցանիշը, պետք է անհատապես սահմանված նվազագույն ժամկետում օդազտիչների, «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» սկզբունքի ներդրման և տեխնիկական ապահովման միջոցով դրանք նորմավորեն: Օդի աղտոտման թույլատրելի չափաքանակն անցնելու դեպքում պետք է կիրառվեն ոչ թե վարչական տույժերի մեխանիզմ, այլ պատասխանատվության քաղաքացիաիրավական միջոցներ (պատճառված վնասի փոխհատուցում, իրավախախտման վերացում):
- Ամբողջ Հանրապետության տարածքում զարգացնել էկոլոգիապես մաքուր՝ էլեկտրական տրանսպորտի ենթակառուցվածքը և դրա հիմքի վրա կանոնակարգել քաղաքային երթևեկությունը: Երևանում և այլ քաղաքներում վերականգնել տրամվայի գործարկումը և զարգացնել մետրոպոլիտենը՝ որպես էներգետիկ անվտանգության ռազմավարության առանցքային տարր: Կանաչապատման նկատառումներից ելնելով՝ պետք է նվազագույնի հասցնել ստորգետնյա ավտոկայանատեղերի քանակը և կառուցվեն վերգետնյա բազմահարկ ավտոկայանատեղիներ:
- Որպես կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի դրսևորում, պետք է արգելվի հատուկ տեխնիկայի օգտագործմամբ որսը (ուղղաթիռով, այլ հարմարեցված տեխնիկայի միջոցներով):
- Որպես երկրի կայուն զարգացման տնտեսական ուղղվածություն՝ զարգացնել էկոլոգիապես մաքուր՝ «կանաչ տնտեսությունը» և ոչ թե հանքահումքի վաճառքի վրա հիմնված՝ բնական պաշարների սպառումը: Խրախուսել հանքանյութի, ինչպես նաև արտադրական և ոչ արտադրական թափոնների վերամշակման տնտեսական գործունեությունը: Հանքանյութի վերամշակման և պատրաստի արտադրանք թողարկելու արտադրություն կազմակերպող տեղական արտադրողի համար սահմանել հանքանյութի ձեռքբերման արտոնյալ պայմաններ: Խրախուսել արդյունաբերական և կենցաղային թափոնների վերամշակման ձեռնարկատիրական գործունեությունը:

4. Արտանետումների և արդյունաբերական թափոնների չեզոքացման կանոնկարգումը. թափոնների առավելագույն չափով վերամշակման պարտադիրությունը.

Հայաստանի Հանրապետության էկոլոգիական քաղաքականությունը պետք է կառուցվի այն հիմնարար դիրքորոշման վրա, որ Հայաստանի տարածքում սկզբունքորեն չպետք է լինեն “մեռյալ գոտիներ”: Պետք է սահմանվեն թափոնների լիարժեք վերամշակման չափանիշներ և ստեղծվեն դրա համար բարենպաստ պայմաններ՝ թափոնները դիտելով որպես շահութաբեր արտադրական հումք: Արտադրական գործունեության հետևանքով շրջակա միջավայրի այլ բաղադրիչների աղտոտումը չպետք է գերազանցի օրենքով սահմանված թույլատրելի առավելագույն չափը: Հիմնախնդիրը պետք է կարգավորվի արդի տեխնոլոգիաների կիրառման և արտադրական գործընթացը արմատապես վերափոխելու ռազմավարական նոր մոտեցումներ կիրառելով:

- Անհրաժեշտ է ներդնել “աղտոտողը վճարում է” սկզբունքը, էկոլոգիապես ոչ մաքուր յուրաքանչյուր գործունեության համար սահմանել միջազգային բարձր չափանիշներին համապատասխանող՝ արտանետումների (շրջակա միջավայրի աղտոտման) առավելագույն թույլատրելի չափ: Որպես լիցենզավորման համար անհրաժեշտ պարտադիր պայման պետք է դիտվի այս պահանջին համապատասխանող տեխնիկական հնարավորությունների առկայությունը: Արդեն իսկ գործող կազմակերպությունները սահմանված ողջամիտ ժամկետում այս պահանջը չկատարելու համար պետք է տուգանվեն ոչ թե ֆիքսված գումարի չափով, այլ հիմք ընդունելով բնական միջավայրին և բնակչության առողջությանը պատճառված վնասի՝ քաղաքացիական և բնապահպանական օրենսդրությամբ սահմանված չափերով:
- Բնական պաշարների շահագործման բոլոր արգասիքները, որոնք տեղակայվում են շրջակա միջավայրում պետք է դիտվեն որպես թափոններ, որոնց համար պետք է գանձվի օրենքով սահմանված չափի վճար (Carbon budget), որը համապատասխան ընկերությունները վճարելու են բնապահպանական հիմնադրամին: Արդեն իսկ առկա պոչամբարներում և այլ վայրերում կուտակված գանգվածները (լցակույտերը) պետք է գնահատվեն ըստ դրանցում պարունակվող նյութերի՝ օրենքով սահմանված վտանգավորության դասի և քանակության:
- Պետք է ներդնել պարտադիր էկոլոգիական հաշվետվողականության համակարգ (ISAR ստանդարտներ էկո-հաշվառման և հաշվետվողականության, կորպորատիվ պատասխանատվության և կորպորատիվ կառավարման մասին), համաձայն որի արտանետումներ իրականացնող կազմակերպությունը պարտավոր է հրապարակային հաշվետվություն ներկայացնել ինքնաստուգման արդյունքում ստացված էկոլոգիական նորմերի պահպանության և իր գործունեության արդյունքում շրջակա միջավայրի փոփոխությունների վերաբերյալ (դրական կամ բացասական ազդեցություն): Տնտեսական գործունեության ոլորտ ներմուծել միջազգային

Էկոլոգիական մշակույթին համարժեք՝ Էկոլոգիապես մաքուր և միջազգայնորեն ճանաչված ստանդարտներ տնտեսվարման ստանդարտներ (ISO 14000 խմբի և այլ ստանդարտներ): Այդ ստանդարտների պահպանմամբ տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին պետք է տրվեն մրցակցային և այլ առավելություններ

- Պետք է իրականացվի արտանետումների (ոչ միայն թափոնների) վտանգավորության որակական և քանակական նոր դասակարգում, ներդրվի շրջակա միջավայրի աղտոտման ռիսկի պարտադիր ապահովագրության համակարգ: Հողային ռեսուրսը ռացիոնալ օգտագործելու նպատակով պետք է գնահատվի հողի բերրի շերտի (հումուսի) շուկայական արժեքը՝ ըստ հողի որակի և սահմանվի տնտեսական գործունեության հետևանքով հողի կորստի թույլատրելի առավելագույն չափ: Հանքարդյունաբերական գործունեություն իրականացնելու հետևանքով զատված հողաշերտը կարող է օգտագործվել միայն նույն հողատարածքի հատվածում՝ ռեկուլտիվացիոն և վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար:
- Հաշվի առնելով Հայաստանի տարածքի սակավությունը, անհրաժեշտ է այլ պետությունների հետ երկկողմ և բազմակողմ պայմանագրեր կնքելով, ինչպես նաև այլ հնարավոր միջոցներով Հանրապետության տարածքից դուրս տեղափոխել այն վտանգավոր թափոնները, որոնք Հանրապետության տարածքում հնարավոր չէ վերամշակել կամ չեզոքացնել: Խրախուսել թափոնների հավաքում, տեսակավորում, վերամշակում և արտադրության կազմակերպում, Հանրապետության տարածքից դուրս փոխադրում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը հարկային, դրամավարկային արտոնություններ տրամադրելով, արտադրանքի երաշխավորված գնմամբ և իրավիճակով թելադրվող այլ միջոցներով:
- Պետք է ստեղծել շրջակա միջավայրի վերականգնման և պահպանության (բնապահպանական) նպատակային հիմնադրամ՝ շրջակա միջավայրի բաղադրիչների նպատակային ստորաբաժանումներով՝ անտառային, ջրային, հողային, մթնոլորտային օդի պահպանության, քաղաքային այգիների և պուրակների բարեկարգման և այլն: Հիմնադրամում պետք է կուտակվեն բնապահպանական վճարները, այն է՝

1/ տնտեսվարող սուբյեկտների կողմից օգտակար բնական պաշարների շահագործման համար անհրաժեշտաբար օգտագործվող կամ վնասվող բնական պաշարները (փայտանյութ, հող, ջուր, բուսական կամ կենդանական աշխարհ, մթնոլորտային օդ): Եթե օգտագործման կամ ոչնչացման ենթակա բնառեսուրսները ապահովում են կայուն եկամուտ (պտղատու այգի, վարելահող և այլն), ապա բնապահպանական վճարը պետք է հաշվարկել սպասվող եկամտի շուկայական արժեքի չափով՝ ներառյալ բաց թողնված օգուտը,

2/ թափոնների համար գանձվող վճարները,

3/ հանքային իրավունք կրողների կողմից հանքի շահագործման նախագծին համապատասխան ռեկուլտիվացիոն աշխատանքներ կատարելու համար

սահմանված չափով կատարվող հատկացումների հաշվին ստեղծվող՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացվող գումարը,

4/ ինչպես նաև շրջակա միջավայրը սահմանված նորմերից ավելի աղտոտելու համար տնտեսվարողներից բռնագանձվող տույժերն ու տուգանքները:

Բնապահպանական հիմնադրամը պետք է լինի շրջակա միջավայրի վերականգնման համար մասնագիտացված կազմակերպություն: Բնապահպանական հիմնադրամի կողմից իրականացվող՝ շրջակա միջավայրի բարելավման և բնության վերականգնման միջոցառումները պետք է իրականացվեն մրցութային կարգով, իսկ իրականացվող աշխատանքներին կարող են ներգրավվել հարակից համայնքները՝ դրանով համայնքի համար ապահովելով լրացուցիչ եկամուտ: Բնապահպանական հիմնադրամից բացի, շրջակա միջավայրի վերականգնման և բարելավման պետական կամ համայնքային նպատակային ծրագրերի իրականացման համար պետք է պետական բյուջեից կատարվեն նպատակային հատկացումներ:

5. Հասարակության և պետության էկոլոգիական անվտանգության իրավական կարգավորումը.

Առողջ և բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու՝ մարդու իրավունքը ամբողջականացնում է մարդու մի շարք կենսական նշանակություն ունեցող իրավունքներ, որոնցից են սեփականության, առողջության և վերջապես կյանքի իրավունքը: Ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ մարդկային քաղաքակրթության առջև կանգնած արդի մարտահրավերները պայմանավորում են բնության պահպանության և վերականգնման հրատապությունը: Տնտեսական շահագործման հետևանքով շրջակա միջավայրին պատճառված անհամաչափ վնասը ստիպեց, որպեսզի “Շրջակա միջավայրի մասին” Ստոկհոլմյան հռչակագրով էկոլոգիական իրավունքները դասվեն մարդու “հիմնարար” իրավունքների շարքին՝ որպես “երկրորդ սերնդի” իրավունքներ: Թեև սահմանադրորեն ամրագրված լինելուն, Հայաստանի այսօրվա քաղաքական իշխանության պատասխանատուները էկոլոգիական իրավունքները հաճախ ընկալում են որպես ածանցյալ, երկրորդական իրավունքներ. դատական ատյանները մերժում են շահագրգիռ հասարակության կողմից ներկայացված հայցերը, պատկան մարմինները չեն տրամադրում շրջակա միջավայրի վերաբերյալ որակյալ և ճշգրիտ տեղեկատվություն, որոշումների կայացմանը հասարակության մասնակցությունը գործնականում լիովին կրում է ձևական բնույթ: Պետական իրավասու մարմինների կողմից շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ նման թեթևամիտ վերբերումները տրամագծորեն հակասում է անձի էկոլոգիական իրավունքների մասին միջազգային հանրության որդեգրած մոտեցումներին:

Էկոլոգիական անվտանգության ոլորտում անհարաժեշտ է մշակել համապարփակ հայեցակարգային մոտեցումներ՝ հիմնված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում

Հայաստանի մասնակցությամբ այս պահին առկա՝ բոլոր 17 միջազգային և 11 տարածաշրջանային պայմանագրերի վրա:

- Որպես անձի էկոլոգիական նյութական իրավունքներ՝ պետք է օրենսդրորեն ամրագրել՝
 - 1/ էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրանքով սնվելու իրավունքը (շուկայում առկա գյուղմթերքում առողջության համար վնասակար նյութերը չպետք է գերազանցեն սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի առավելագույն չափը),
 - 2/ թափոնների անվտանգ շրջանառման վերաբերյալ նորմերի խախտման հետևանքով իրենց առողջությանը կամ ունեցվածքին պատճառված վնասի համար օրենքով սահմանված կարգով լիարժեք հատուցում պահանջելու իրավունքը:
- Պետք է արգելվի Հայաստանի միջազգային պայմանագրերի խախտմամբ շրջակա միջավայրին անհամաչափ վնաս հասցնող ցանկացած գործունեություն, ներառյալ արդեն իսկ սկսված և խոշոր ներդրումներ իրականացված նախագծերը (օրինակ՝ Թեղուտի հանքավայրի շահագործումը)՝ օրենքին տալով հետադարձ ուժ: Շրջակա միջավայրին անհամաչափ վնաս պատճառող գործունեության համար պետք է կիրառվի զրոյական գործողության այլընտրանք (նախատեսվող գործունեության բացառում) ռեժիմը:
- Պետք է օրենքով սահմանված սեղմ ժամկետներում վերանայվեն բնական պաշարներ շահագործող բոլոր կազմակերպություններին տրված հանքային իրավունքները և տրամադրվեն հանքային նոր իրավունքներ՝ սույն հայեցակարգով ներկայացված էկոլոգիական սահմանափակումների և տեխնոլոգիական ստանդարտների շրջանակներում: Սույն պահանջը պայմանավորված է հանքերի և այլ բնական պաշարների նկատմամբ իրավունքների ձեռք բերման ընթացակարգի համատարած կոպիտ խախտումների հետ (ռազմավարական բնական պաշարներն առանց մրցույթի տրամադրել, ՇՄԱԳ-ի չափանիշների բացակայություն, փորձաքննությունների ընթացքում թույլ տրված հիմնարար խախտումներ և այլն):
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» ՀՀ օրենքով պետք է հստակ և մանրամասն կարգավորվեն ազդեցության գնահատման բոլոր չափանիշները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը փաստաթղթերի այն փաթեթն է, որում ընդգրկված է նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ ամբողջական և համապարփակ տեղեկատվություն նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության բոլոր տեսակների, այդ ազդեցության համաչափության և թույլատրելիության, տնտեսական վնասի հաշվարկման, աշխատանքային նախագծի տեխնոլոգիական իրագործելիության եւ այլ հարցերի վերաբերյալ: Կարևոր է նաև իրավաբանորեն հստակ սահմանել, որ ՇՄԱԳ-ը փորձագիտական նշանակություն է

արժեք ունեցող փաստաթուղթ է, իսկ ՇՄԱՓ-ը՝ վարչական ակտ, որը ենթակա է սահմանված կարգով, այդ թվում՝ դատական կարգով բողոքարկման:

- Օրենքով (բյուջեի մասին օրենք, ՇՄԱՓ օրենք և այլ օրենքներ) պետք է կարգավորվեն՝
 - 1/ բնապահպանական և բնօգտագործման վճարների բոլոր տեսակներին և դրանց դրույքաչափերին վերաբերող բոլոր հարցերը,
 - 2/ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափանիշները և բնապահպանական փորձաքննության կարգն ու պայմանները (փորձաքննության ենթակա փաստաթղթերի փաթեթը, փորձագետների ընտրության կարգը և այլն),
 - 3/ հանրային լսումների անցկացման կարգն ու պայմանները՝ էկոլոգիական դիտորդական խմբի պարտադիր մասնակցությամբ,
- Անտառի, բուսական և կենդանական աշխարհի, հողի, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի իրավաբանական բնորոշման մեջ ավելացնել դրանց տնտեսական արժեքի գնահատման հստակ չափանիշներ: Շրջակա միջավայրի նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի, բնության բաղադրիչների ոչնչացման համար (ծառահատումներ, հողի, ջրերի, մթնոլորտային օդի աղտոտում և այլն), որոնք չեն առաջացնում քրեական պատասխանատվություն, պետք է վարչական միջոցների փոխարեն կիրառվեն քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ՝ պատճառված վնասի փոխհատուցման ամբողջ ծավալով: Արդեն իսկ սկսված բնօգտագործման, հանքարդյունաբերական գործընթացի հետևանքով բնությանը պատճառված վնասը պետք է փոխհատուցվի բնության ոչնչացված բոլոր բաղադրիչների համար օրենքով սահմանված դրույքաչափերին համապատասխան՝ շուկայական գներին համարժեք բաց թողնված հասույթի հաշվառմամբ:
- Անհրաժեշտ է արմատապես վերանայել «բացառիկ՝ գերակա հանրային շահ» եզրույթի իրավաբանական նշանակությունը: Ներկայումս հողի նպատակային նշանակությունը փոխելու և հանքային շահագործման տրամադրելու համար բավարար է միայն, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում այդ մասին կայացվի կառավարության որոշում, մինչդեռ օրենքը չի սահմանում հանրային շահի «բացառիկության» կամ «գերակայության», ինչպես նաև այդ շահի «հանրային» լինելը հավաստող հստակ չափանիշներ: Գործնականում, գույքը «բացառիկ՝ գերակա հանրային շահի» պատրվակով օտարվում է գրեթե բոլոր այն դեպքերում, երբ մասնավոր ընկերությունները մտադիր են ձեռնարկել որևէ առևտրային գործունեություն (Հյուսիսային պողոտայի կառուցապատումը, Թեղուտի հանքի շահագործումը, Քաջարանի հանքի ընդլայնման ծրագիրը և այլն) իրականացնելով շահույթ հետապնդող գործունեություն ազգային սեփականության՝ ոսկու, պղնձի, մոլիբդենի, երկաթի և այլ օգտակար հանածոների, քաղաքային կանաչ տարածքների հաշվին: Առնվազն էկոլոգիական իրավահարաբերությունների շրջանակներում իրավական այս ռեժիմն անընդունելի է: Էկոցանցում ընդգրկված տարածքներում տնտեսական գործունեություն իրականացնելու համար չի կարող գործել «բացառիկ՝

գերակա հանրային շահ” եզրույթն իր այսօրվա ընդհանուր իրավական բովանդակությամբ: Շրջակա միջավայրին վերաբերող որոշումների կայացման համար “բացառիկ՝ գերակա հանրային շահի” առկայությունը պետք է հիմնավորված լինի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականով՝ հանրային լուսման անցնելուց և հասարակության (ազդակիր համայնքի և շահագրգիռ հասարակության) թույլտվության առկայությամբ:

- ՀՀ քրեական, օրենսգրքում պետք է սահմանվեն շրջակա միջավայրի դեմ ուղղված նոր հանցատեսակներ, խստացվեն առկա պատժատեսակների պատժաչափերը՝ առավելապես գույքային պատասխանատվություն սահմանելու կամ դրա չափը մեծացնելու միջոցով: Շրջակա միջավայրին վնաս պատճառող անօրինական որոշումներ կայացրած պաշտոնատար անձինք նյութական պարտավորություն պետք է կրեն հանրությանը և շրջակա միջավայրին պատճառված վնասի համար՝ պատճառված վնասի ամբողջ ծավալի չափով՝ օրենքի ակնհայտ (գիտակցված) խախտմամբ գործունեություն իրականացնող բնօգտագործողների հետ համապարտության կարգով:
- Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, որ օֆշորային գոտիներում գրանցված և բնական պաշարների շահագործման հետ կապված տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունները Հայաստանում գործող այլ տնտեսվարող սուբյեկտների հետ հավասար պայմաններում իրենց տնտեսական գործունեության վերաբերյալ տրամադրեն ամբողջական տվյալներ և հաշվետվություններ: Բնական պաշարներից բնօգտագործման վճարների տեսքով արվող բյուջետային մուտքերը պետք է պետական բյուջեում սահմանվեն առանձին տողով:

6. Բնօգտագործման գործընթացը քաղաքացիական հասարակական կողմից վերահսկելու գործուն մեխանիզմների մշակումը.

Էկոլոգիական հարցերի լուծման գործընթացներին հասարակության՝ օրենքով ամրագրված գործուն մասնակցությունը վճռորոշ երաշխիքներ է ստեղծում շրջակա միջավայրի արդյունավետ պաշտպանության և պահպանման համար: Հետևապես, պետք է գործնականում ապահովել հասարակության ներգրավումը և մասնակցությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության բոլոր փուլերին: Հասարակությունը ոչ միայն պետք է մասնակցի քննարկումներին, այլև գործուն ազդեցություն ունենա որոշումների կայացման գործընթացի վրա:

- Հաշվի առնելով, որ ազդակիր համայնքների բնակչությունը հիմնականում չի տիրապետում էկոլոգիական վտանգների վերաբերյալ գիտելիքներին՝ հանրային լուսմանը պետք է անցկացվեն հասարակության էկոլոգիապես կոմպետենտ

հատվածի պարտադիր մասնակցությամբ (բնապահպանական հասարակական կազմակերպություններ, անկախ փորձագետներ և այլն):

- Էկոլոգիական վտանգներին լիարժեք գնահատական տալու համար պետք է լրացնել “ազդակիր համայնք” եզրույթի օրենսդրական բովանդակությունը: Բացի ազդակիր համայնքից հանրային լսումներին պետք է մասնակցի “շահագրգիռ հասարակությունը”, որը Հանրապետության ամբողջ բնակչությունն է՝ ինստիտուցիոնալիզացված տեսքով (բնապահպանական հասարակական կազմակերպություններ, արհեստակցական միավորումներ և այլն): Ազդակիր համայնքը և շահագրգիռ հասարակությունը պետք է լրատվական և այլ արդյունավետ միջոցներով տեղեկացվեն համապատասխան հանրային լսումների անցկացման վայրի և ժամանակի մասին՝ անկախ նրանից, թե Հանրապետության որ հատվածում է նախատեսվում իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող գործողություն:
- Շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող նյութական և դատավարական իրավունքների շրջանակներում շահագրգիռ հասարակությունը պետք է բնապահպանական հարցերի վերաբերյալ ունենա օրենքով երաշխավորված՝ դատարան դիմելու իրավունք: Ազդակիր համայնքի անդամներն այդ իրավունքից կարող են օգտվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբակային, իսկ շահագրգիռ հասարակությունը հասարակական կազմակերպությունների և այլ հավաքական կառույցների միջոցով, որոնց կանոնադրական նպատակների մեջ մտնում է բնապահպանությունը: Այս իրավունքը յուրաքանչյուրի՝ Սահմանադրության 18-րդ հոդվածի իմաստով դատարան դիմելու հիմնարար իրավունք:
- Օրհուսի կոնվենցիայով ամրագրված՝ որոշումների կայացմանը հասարակության մասնակցությունն իմաստավորելու համար պետք է ներդրվի տեղական հանրաքվեի և հարցման իրավական պրակտիկա, իսկ հասարակությունը (ազդակիր համայնքը) շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ հարցերի շուրջ պետք է որոշիչ ձայնի իրավունք ստանա: Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա մարզի (մարզերի), համայնքի (համայնքների) բնակչությունը պետք է իրավունք ունենա տեղական հանրաքվեի միջոցով արգելելու նախատեսվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող գործունեությունը՝ անկախ այն բանից, թե ինչ չափի վնասակար ազդեցություն կարող է ունենալ համայնքի համար: Քաղաքային վայրերում “կետային կառուցապատում” իրականացնելու համար ևս պարտադիր պետք է լինի անմիջական հարակից տարածքի (տեղի ազդակիր համայնքի) բնակչության գրավոր համաձայնությունը՝ արտահայտված տեղական հանրաքվեի կամ հարցման արդյունքներով:
- ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 21-րդ հոդվածի նախադեպով է պետք է ստեղծել շրջակա միջավայրի պահպանության համար վերահսկողություն իրականացնող դիտորդական խումբ: Խումբը գործելու է մշտական հիմունքներով և օժտված է լինելու օրենքով սահմանված գործուն լիազորություններով՝ արտաբյուջետային

Ֆինանսավորմամբ (բնապահպանական հիմնադրամի կողմից և այլ միջոցներով): Խումբը պետք է իրավունք ունենա անարգել, նախնական նախազգուշացմամբ մուտք գործել շրջակա միջավայրին վտանգ սպառնացող գործունեություն իրականացնող օբեյկտների տարածքներ, կատարել նկարահանումներ: Հասարակական լսումների շրջանակներում կազմակերպվող քննարկում-ժողովներին ազդակիր համայնքի ներկայացուցիչներից բացի հանրային լսումներին պետք է մասնակցեն դիտորդական խմբի անդամները: Նախագծի վերաբերյալ դիտորդական խմբի նկատառումներն ու դիտողությունները պետք է նախաձեռնողի կողմից պարտադիր հաշվի առնվեն և գրավոր պատասխան ստանան:

Շահագրգիռ հասարակության ներկայացուցիչները (հասարակական կազմակերպություններ և այլ խմբեր) քննարկումներին կարող են մասնակցել սեփական նախաձեռնությամբ: Բացի վերահսկողական գործառույթներից, դիտորդական խմբի առաքելությունը պետք է լինի հասարակության էկոլոգիական դաստիարակությունը՝ վնասակար ազդեցությունների գոտիներում վճարովի հիմունքներով կազմակերպել ծրագրային դասընթացներ, սեմինարներ, ձևավորել միջազգային կապեր և այլն: Դիտորդական խումբը պետք է իրավունք ունենա պատկան մարմիններին ներկայացնել էկոլոգիական օրենսդրության փոփոխությունների և լրացումների մասին պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ, մասնակցել դրանց քննարկմանը: Էկոլոգիական քաղաքականության վերաբերյալ դիտորդական խմբի դիտողությունները և առաջարկությունները, այդ թվում՝ իրավական համատեքստում, պատկան մարմինների համար պետք է հանդիսանան պարտադիր քննարկման առարկա: